2024 թվականի 1-ին եռամսյակում Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան փետրվար և մարտ ամսներին գերազանցել է համապատասխան ՍԹՎ-ն 1.4-1.5 անգամ:


Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹՎ-ները:



Գծապատկեր 35. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 36. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 37. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Կապան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 38. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 39. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 շարժական պասսիվ նմուշառման դիտակետ:

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 40. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 41. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 42. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 43. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Ծաղկածոր

Ծաղկածոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:


Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 44. Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 45. Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները









Գծապատկեր 46. Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Օադկածոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ




-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Բնակավայրեր










Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սահմանային (մկգ/մ³)




**Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO₂)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



Պայմանական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Միջպետական ճանապարհ
-  Երկաթգծեր
-  Բնակավայրեր

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մկգ/մ³)



Մթնոլորտային տեղումների որակ

2024 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում իրականացվել է 11 տեղումի նմուշառում: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 32-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 5-ում, մնացած ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 4. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.


Ամսաթիվ	Ջրածնային և ցուցիչ	Էլեկտրահաղորդ ա-կանություն, մկՍմ/սմ	Սուլֆատ իոն, մգ/լ	Քլորիդ իոն, մգ/լ	Նիտրատ իոն, մգ/լ	Ամոնիում իոն, մգ/լ
05.01.2024	6.1	13.4	1.9	0.4	0.9	0.2
12.01.2024	5.8	26.5	3.2	0.4	2.1	0.5
13.01.2024	5.6	15.3	1.8	0.7	1.1	1.0
22.01.2024	6.2	15.0	2.0	0.7	1.2	0.5
23.01.2024	6.2	9.6	0.7	1.0	0.8	0.1
27.01.2024	6.0	15.1	2.3	0.5	2.8	0.3
07.03.2024	5.7	13.4	2.0	0,3	1.1	0.4
19.03.2024	5.8	9.6	4.9	1.1	0.3	0.3
22.03.2024	6.0	16.8	4.5	0.6	1.6	0.2
23.03.2024	5.7	11.0	2.0	0.5	0.7	0.9
26.03.2024	6.1	9.3	0.8	0.4	0.2	0.4

Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման համատեղ ծրագիր


Մթնոլորտային օդ

Ամբերդի միջազգային կայանում 2024 թվականի 1-ին եռամսյակում կատարվել են մթնոլորտային օդի և փոշու դիտարկումներ: Մթնոլորտային օդի նմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու նմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:

Ազոտի երկօքսիդի ($ՍԹԿ_{միջ.}=0.04մգ/մ^3$) և ամոնիակի ($ՍԹԿ_{միջ.}=0.04մգ/մ^3$) միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 47. Ամբերդի կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 48. Ամբերդի կայանում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Մթնոլորտային տեղումների որակ

2024 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է տեղումների 15 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 32-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 6-ում: 4-րդ եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում.

Աղյուսակ 5. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.

Ամսաթիվ	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն, մկՍմ/սմ	Սուլֆատ իոն, մգ/լ	Քլորիդ իոն, մգ/լ	Նիտրատ իոն, մգ/լ	Ամոնիում իոն, մգ/լ
06.01.2024	6.1	69.3	5.7	2.8	2.1	1.3
11-12.01.2024	6.2	23.5	2.7	0.8	2.7	0.9
12-13.01.2024	6.3	43.1	6.1	2.4	3.0	2.3
14-15.02.2024	5.3	12.2	1.9	0.7	1.9	0.1
16.02.2024	6.4	23.7	1.2	1.4	1.2	1.7
17.02.2024	6.1	54.6	1.8	4.2	2.9	3.2
19.02.2024	5.9	15.5	1.9	0.7	1.7	1.5
23.02.2024	6.2	25.3	2.5	1.6	1.4	1.8
07.03.2024	5.5	7.3	1.1	0.1	0.7	0.7
18-19.03.2024	6.0	11.9	0.4	1.2	0.2	0.2
19-20.03.2024	6.4	26.1	0.9	1.0	1.5	0.8
21.03.2024	6.0	15.4	1.5	0.7	0.8	0.5
22.03.2024	6.1	35.9	3.5	2.2	0.9	2.0
23.03.2024	6.0	8.6	0.8	0.8	0.1	0.02
26.03.2024	6.0	20.4	1.7	1.2	0.3	0.4

4. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՁՐԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.

- կենցաղային հոսքաջրերը.
- արդյունաբերական հոսքաջրերը.
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները.
- բնակավայրերից վնասակար նյութերը.
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբանականության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Մակերևութային ջրեր

2024 թվականի 1-ին եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 91 հիդրոլոգիական դիտակետում, այդ թվում՝ 80 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային (Արփի լիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ազատ) և 4 լճային (Սևանա լճում): Դիտակետերում իրականացվում են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ (առկայության դեպքում), ջրի էլքի չափումներ): 59 օպերատիվ դիտակետերից ամենօրյա ռեժիմով ստացվում են տվյալներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ:

2024 թվականի 1-ին եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 51 գետի, Ախուրյանի, Երևանյան լիճ և Կեչուտի ջրամբարների, Արփա-Սևան ջրատարի և Սևանա լճի 14 դիտակետում: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ): Ջրի որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրաքիմիական յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը: Գործում է հետևյալ սկզբունքը. «Եթե մեկը վատ վիճակում է, ապա բոլորն են վատ վիճակում»: Ջրամբարներում ջրի որակի գնահատումը կատարվում է միայն սնուցող նյութերով:

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակի մոնիթորինգ իրականացվել է ազգային ցանցում ընդգրկված 119 դիտակետում, այդ թվում՝ 25 շատրվանոց հորատանցք, 35 չշատրվանոց հորատանցք, 12 գրունտային ջրհոր և 47 բնաղբյուր: Դիտակետերում կատարվել են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի չափումներ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հյուսիսային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 21 դիտակետում: Որոշ օպերատիվ հիդրոլոգիական դիտակետերի ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր. մ ³ /վ								
		հունվար			փետրվար			մարտ		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Փամբակ	Թումանյան	3.92	4.96	79	4.27	5.32	80	7.24	8.78	82
Դեբեդ	Այրում	15.6	14.7	106	17.3	15.7	110	29.2	28.1	104
Ձորագետ	Գարգառ	7.58	7.32	104	8.33	7.71	108	11.7	11.8	99
Աղստև	Իջևան	2.96	3.15	94	4.12	3.47	119	7.37	7.78	95
Գետիկ	Գոշ	0.87	1.07	81	1.04	1.14	91	2.18	2.95	74

Մակերևութային ջրերի որակ

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում:

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սալիտակ քաղաքից ներքև՝ հունվար և մարտ ամիսներին «անբավարար» (4-րդ դաս), փետրվարին՝ «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից վերև ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև երեք ամիսների ընթացքում՝ «վատ» որակ (5-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև, Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հունվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), փետրվարին՝ «լավ» (2-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

Տաշիր գետի ջրի որակը Սարատովկա գյուղից ներքև հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Մարց գետի ջրի որակը գետաբերանում փետրվարին և մարտին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Ախթալա գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Շնող գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև, Դիլիջան քաղաքից ներքև, Իջևան քաղաքից վերև հատվածներում փետրվարին և մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Իջևան քաղաքից ներքև փետրվարին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):


Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում փետրվարին և մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):




Գծապատկեր 49. Փամբակ գետում ամռնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 50. Դեբեդ գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 51. Ախթալա գետում պղնձի կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 52. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր




Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգ իրականացվել է 2 բնադրյուրում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ: Դիտակետերը գտնվում են Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղում:

N2059 դիտակետում ծախսի իջեցում է նկատվել, տատանումները կազմել է 0.09լ/վ: N2058 դիտակետում 0.03լ/վ-ով ավելացում է դիտարկվել:



Գծապատկեր 53. Հյուսիսային ՋԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼՃԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Բաղարներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի**
- ▲ Որակի մոնիթորինգի դիտակետեր
- ▲ Հիդրոլոգիական դիտակետեր
- ▲ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք
- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Ախտորյանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում. այդ թվում՝ 14 գետային և 2 ջրամբարային: Օպերատիվ երկու դիտակետերի ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Ախտորյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր. մ ³ /վ								
		հունվար			փետրվար			մարտ		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ախտորյան	Ախտորիկ	4.82	5.83	83	4.88	5.93	82	5.39	7.50	72
Մեծամոր	Մեծամոր	2.07	24.3	9	3.01	24.2	12	4.16	25.6	16


Մակերևութային ջրերի որակ

Ախտորյանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում:

Ախտորյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Գյումրի քաղաքից վերև և Բագարան գյուղից ներքև հատվածներում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Գյումրի քաղաքից ներքև ջրի որակը մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանում մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք փետրվարին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև ջրի որակը փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):



Գծապատկեր 54. Մեծամոր գետում ֆոնդատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 40 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Ախուրյանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում՝ Եղեգնուտի, Վարդանաշենի, Տարոնիկի, Ակնաշենի, Ապագայի չշատրվանող հորատանցքերում նկատվել են ջրի մակարդակների բարձրացումներ 0.03-0.33մ-ի սահմաններում: Արագափի N1537 հորատանցքում հակառակ պատկերն է, ջրի մակարդակը իջել է 0.16մ-ով: Բարձրացումներ են նկատվել Ապագա N2020 գրունտային ջրհորում, որտեղ ջրի մակարդակը բարձրանալով 0.25մ կազմել է -1.31մ, իսկ Լուսազյուղի N2022 ջրհորում կայուն վիճակ է:


Արմավիրի մարզի շատրվանող հորատանցքերից Ջրառատի N2021 և Ակնաշենի N2001 դիտակետերում ջրի ծախսի բարձրացումները՝ 0.26լ/վ և 0.09լ/վ-ով: Տարոնիկի N2002 և Գայի N1521 դիտակետերում նկատվել են ծախսերի, մակարդակների գրեթե կայուն վիճակներ:

Բամբակաշատի և Հայկավանի (N2024, N2025) դիտակետերում նկատվել են ստորերկրյա ջրերի մակարդակի բարձրացումներ 0.05մ և 0.04մ-ով:


Արարատյան դաշտի նախալեռնային գոտու Արագածավան N2080, Արտենի N2081, Արտամետ N2083, Մյասնիկյան N2082 համայնքների դիտակետերում դիտվել են ստորերկրյա ջրերի մակարդակների իջեցումներ 0.14-0.85մ-ով:

Գյումրիի N2029, N2030, N2031 և Աշոցքի աղբյուրներում դիտարկվել են կայուն վիճակներ, նկատվում են ծախսի աննշան ավելացումներ կամ իջեցումներ: Գյումրի քաղաքի N2037 և Մարմաշենի N2032 բնաղբյուրներում ծախսի իջեցումները տատանվել են մինչև 0.14լ/վ: Հակառակ պատկերն է N2077, N2035, N2038, N2039, N2040 դիտակետերում, այստեղ ծախսի բարձրացումները կազմել են 0.05-0.2լ/վ:


Ախուրյանի N2043 գրունտային ջրհորում ջրի մակարդակը իջել է 0.52մ-ով՝ հասնելով -9.65մ-ի, իսկ Առափի գյուղի N2042 գրունտային ջրհորում մակարդակը բարձրացել է 0.15մ-ով:





Գծապատկեր 55. Ախուրյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 56. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 57. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները





Գծապատկեր 58. Ախտորյանի ՋԿՏ-ի չբատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 59. Ախտորյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները

ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի
մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
- ▲ որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▲ հիդրոլոգիական դիտակետեր
 - ◆ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Հարավային ջրավազանային կառավարման տարածք
- Մակերևութային ջրերի որակի դասեր
- 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում. այդ թվում՝ 13 գետային, 2 ջրամբարային և մեկ 1 ջրանցքի: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ ³ /վ								
		հունվար			փետրվար			մարտ		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	2.05	2.82	73	2.13	2.86	74	2.69	5.46	49
Հրազդան	Արգել	1.93	2.92	66	1.90	3.02	63	2.19	4.18	52
Հրազդան	Երևան	5.94	6.12	97	5.44	7.55	72	5.57	12.8	44
Մարմարիկ	Հանքավան	0.50	0.38	132	0.38	0.38	100	0.41	0.68	60
Մարմարիկ	Աղավնաձոր	1.31	1.19	110	1.34	1.22	110	1.72	2.50	69
Քասախ	Վարդենիս	0.34	0.46	74	0.35	0.50	70	0.49	1.21	40
Քասախ	Աշտարակ	2.96	2.56	116	2.85	2.57	111	3.67	3.94	93

Մակերևութային ջրերի որակ

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև ջրի որակը մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում ջրի որակը մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Գեղարոտ գետի ջրի որակը գետաբերանում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև և Արգնի ՀԵԿ-ից վերև հատվածներում փետրվարին և մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Արգել գյուղից ներքև հատվածում ջրի որակը փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ և գետաբերանի հատվածներում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Գեղանիստ գյուղի մոտ և Երևանյան լճի մուտքի մոտ հատվածներում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Գետառ գետի ջրի որակը գետաբերանում փետրվարին և մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը գետաբերանում փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):


Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև փետրվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ փետրվարին և մարտին՝ «վատ» (5-րդ դաս):



Գծապատկեր 60. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 61. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 62. Հրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:


Հրազդանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում, Մասիսի N1519, Հովտաշատի N1523, Սիս N1536 դիտակետերում ծախսերն ավելացել են 0.03-0.13լ/վ սահմաններում, իսկ Հովտաշենի N2053, N2008 և Ջրահովիտի N2007 դիտակետերում ծախսերը իջել են 0.04-0.11լ/վ-ով: N1535, N1526

Սիս համայնքի N78, Հայանիստի N2005 դիտակետերում դիտվել են ջրի մակարդակի առավել կայուն վիճակներ, իսկ Ջրահովիտի N2004 հորատանցքում ջրի մակարդակը իջել է 0.22մ-ով:


Արարատյան դաշտի նախալեռնային գոտու՝ Աղավնատան N2087, Դողսի N2086, Փարպի N2119 դիտակետերում դիտվել են ջրերի մակարդակների նվազում 0.22-3.12մ, իսկ Լեռնամերձի N2088 և Արագածի N2085, հորատանցքերում նկատվել են անշան բարձրացումներ:

Հրազդանի ՋԿՏ-ի Կարբի N1636, Բջնի N246, Սուլակի, N1832 բնադրյուրներում նկատվել են 0.2-1.95լ/վ-ով ծախսի բարձրացումներ: Երևանի N970 դիտակետում 0.4լ/վ-ով ավելացել է ծախսը և մարտ ամսին կազմել է 6.5լ/վ: Ղազարավանի N755 աղբյուրի ջրի ծախսը կայուն է՝ 2.9լ/վ, Սուլակի N1297 բնադրյուրում նույնպես ծախսը անփոփոխ է մնացել:


Ապարանի N2051 և N2107 դիտակետերում նույնպես դիտվել են ծախսերի իջեցումներ մինչև 0.4լ/վ: Նիգավանի N2011 դիտակետերում մակարդակի իջեցում է դիտվել 1.2մ, իսկ N2010 ջրհորում կայուն վիճակ է դիտարկվել: Բյուրականի, Բուժականի N2108, N2105 դիտակետում նկատվել է ծախսի բարձրացում 0.07-0.39լ/վ-ով:




Գծապատկեր 63. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 64. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 59. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները







Գծապատկեր 65. Հրազդանի ՋԿՏ-ի չատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 66. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
- ▲ որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▲ հիդրոլոգիական դիտակետեր
 - ◆ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք
-
- Մակերևութային ջրերի որակի դասեր
- 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս



Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում. այդ թվում՝ 12 գետային. 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ ³ /վ								
		հունվար			փետրվար			մարտ		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ձկնագետ	Ծովագյուղ	0.19	0.20	95	0.25	0.24	104	0.41	0.73	56
Մասրիկ	Ծովակ	2.15	2.53	85	2.21	2.59	85	2.43	2.97	82
Մարտունի	Գեղհովիտ	0.58	0.74	78	0.58	0.73	79	0.72	0.80	90
Արգիճի	Վ. Գետաշեն	2.56	2.29	112	2.47	2.29	108	2.79	2.81	99
Գավառագետ	Նորատուս	2.28	2.97	77	2.47	2.93	84	2.93	3.30	89

Մակերևութային ջրերի որակ

Սևանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 18 դիտակետում:

Ձկնագետ գետի ջրի որակը գետաբերանում հունվարին և մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), փետրվարին՝ «վատ» (5-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը գետաբերանում հունվարին և փետրվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Արգիճի գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Օակքար գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Շողվազ գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Գավառագետ գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Գծապատկեր 67. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 68. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 69. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:



Սևանի ՋԿՏ-ի N31, N902, N1809, N1810, N2101 դիտակետերում շարունակվել են ջրի մակարդակների և ծախսերի իջեցումները մինչև մարտ ամիսը:

Ակունքի N31 և N902 բնաղբյուրներում մարտ ամսից դիտարկվել են ջրի ծախսերի ավելացումներ 14.7-19.0լ/վ-ի սահմաններում: Ակունքի N1053 դիտակետում ծախսի ավելացում է նկատվել 0.2լ/վ-ով:


Վարդենիս, Վաղաշեն, համայնքների N1809, N1812, N2090 շատրվանոց հորատանքերում և Խաչաղբյուրի N2093 բնաղբյուրում դիտվել են ջրի մակարդակների և ծախսերի բարձրացումներ, իսկ Վարդենիսի N1811 դիտակետում դիտվել է համեմատաբար կայուն ռեժիմ: Դարանակ N2095 շատրվանոց հորատանցքում և Լիճքի N2101 բնաղբյուրում նկատվել են թույլ իջեցումներ:

Գանձակի N2013 դիտակետում աղբյուրի ծախսը ավելացել է չնչին քանակությամբ՝ 0.09լ/վ: Գավառի N2014 և Աղբերքի N2091 բնաղբյուրներում նկատվել է կայուն վիճակ:


Լիճքի N2101 հորատանցքում ջրի մակարդակը շարունակվել է իջնել՝ հասնելով երկրի մակերևույթից ցածր 1.58մ-ի (փետրվար ամիս), իսկ մարտ ամսին բարձրացել է 0.12մ-ով:



Չճապատկեր 70. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 75. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 71. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները

Սևանա լիճ

2024 թվականի 1-ին եռամսյակում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): Հիդրոոդերևութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի հունվար, փետրվար և մարտ ամիսների ջրային հաշվեկշիռը:

**Աղյուսակ 10. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2024 թվականի 1-ին եռամսյակում
Հունվար**

Ջրային հաշվեկշիռի տարրերը	Ընդամենը (մլն. մ ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ ³) 1961–2023թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
<i>ՄՈՒՏՔ</i>							
Լիճը թափվող գետերով	10.77	10.60	11.51	32.88	24.0	37.1	49.2
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	2.08	2.18	2.37	6.63	0.00	8.54	20.4
Տեղումները լճի մակերևույթի վրա	5.40	8.40	29.8	43.6	2.10	22.6	78.8
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	2.90	5.80	7.90
Ընդամենը	20.85	23.78	46.38	91.01	31.8	68.5	127.1
<i>ԵԼՔ</i>							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	21.6	184.6
Գոլորշացում լճի մակերևույթից	21.4	20.0	18.9	60.3	36.1	65.2	86.5
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	21.80	20.40	19.30	61.50	36.6	95.9	249.6
Կուտակում (նվազում)	-25.50	0.00	0.00	-25.50	-167.1	-32.5	63.3
Բացարձակ անկասք	24.55	3.38	27.08	55.01		2.20	
Հարաբերական անկասք %	53.0	14.2	58.4	47.2	0.10	6.60	28.8

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ ²	Լճի ծավալը, կմ ³
Ամսվա առաջին օրը	1900.17	1275.372	37.7563
Ամսվա վերջին օրը	1900.15	1275.182	37.7308
Միջին ամսական	1900.15	1275.182	37.7308

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.02 (մ)
31.01.24 և 31.01.23 մակարդակի տարբերությունը -0.10 (մ)

Փետրվար

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ ³) 1961–2023թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	10.69	11.33	10.04	32.06	22.6	34.8	43.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	2.02	2.08	1.88	5.98	1.10	7.13	22.6
Տեղումները լճի մակերևույթի վրա	1.50	2.20	2.90	6.60	4.90	26.9	81.2
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.50	7.70	3.70	5.50	7.90
Ընդամենը	16.81	18.21	17.32	52.34	37.0	73.0	134.2
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	20.8	157.0
Գոլորշացում լճի մակերևույթից	8.30	15.60	9.70	33.60	0.00	32.8	84.2
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.00	1.70
Ընդամենը	8.70	16.00	10.10	34.80	0.40	61.3	180.5
Կուտակում (նվազում)	0.00	25.40	12.80	38.20	-103.4	12.0	77.0
Բացարձակ անկապք	8.11	-23.19	-5.58	-20.66		0.10	
Հարաբերական անկապք %	48.2	56.0	24.4	28.3	0.00	6.10	45.3

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ ²	Լճի ծավալը, կմ ³
Ամսվա առաջին օրը	1900.14	1275.087	37.7181
Ամսվա վերջին օրը	1900.17	1275.372	37.7563
Միջին ամսական	1900.15	1275.182	37.7308

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում 0.03 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 01.01.24 29.02.24 ընթացքում 0.00 (մ)
 29.02.24 և 28.02.23 մակարդակի տարբերությունը -0.07 (մ)

Մարտ

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ ³) 1961–2023թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	11.52	12.19	15.10	38.81	32.7	51.0	85.8
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	2.05	2.28	2.97	7.30	1.90	9.87	35.2
Տեղումները լճի մակերևույթի վրա	9.60	53.3	16.1	79.0	12.6	41.2	93.0
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	3.60	5.80	7.90
Ընդամենը	25.77	70.37	36.87	133.01	55.6	100.4	178.3
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	16.7	168.0
Գոլորշացում լճի մակերևույթից	9.00	6.50	8.80	24.3	0.00	27.5	53.7
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	9.40	6.90	9.20	25.5	0.40	49.0	175.0
Կուտակում (նվազում)	12.7	38.2	25.5	76.4	-90.5	52.7	128.9
Բացարձակ անկապք	3.67	25.27	2.17	31.11		-1.00	
Հարաբերական անկապք %	14.2	35.9	5.89	23.4	0.70	4.20	38.5

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ ²	Լճի ծավալը, կմ ³
Ամսվա առաջին օրը	1900.17	1275.372	37.7563
Ամսվա վերջին օրը	1900.23	1275.943	37.8327
Միջին ամսական	1900.20	1275.657	37.7945

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում 0.06 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 01.01.24 31.03.24 ընթացքում 0.06 (մ)
 31.03.24 և 31.03.23 մակարդակի տարբերությունը -0.08 (մ)

2024 թվականի հունվարի 1-ին Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.17 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 11 սմ-ով: 2024 թվականի մարտի 31-ին լճի մակարդակը կազմել է 1900.23 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 8 սմ-ով: 2024 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը լճի մակարդակը բարձրացել է 6 սմ-ով, ընդ որում հունվարի 1-ից մինչև փետրվարի 12-ը մակարդակն իջել է -3 սմ, իսկ փետրվարի 12-ից մինչև մարտի 31-ը բարձրացել 9 սմ:

Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի ծավալը հունվար ամսին կազմել է 6.634 մլն մ³, փետրվարին՝ 5.976 մլն մ³, մարտին՝ 7.299 մլն մ³:

2024 թվականի հունվարի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1275.372 կմ², ծավալը 37.7563 կմ³, իսկ մարտի 31-ին համապատասխանաբար՝ 1275.943 կմ² և 37.8327 կմ³:

Սևանա լճի ջրերի որակ


Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների երկու դիտակետում՝ տարբեր խորության շերտերում: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման Հավելված 12.1-ի համաձայն:

Մեծ Սևանի 22-րդ կայանի մոտ մակերևութային շերտում ջրի որակը մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 0.5մ խորության շերտում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 5մ, 10մ, 25մ և 30մ խորության շերտերում ջրի որակը փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս), 20մ խորության շերտում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Փոքր Սևանի 4-րդ կայանի մոտ մակերևութային շերտում ջրի որակը մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 0.5մ, 5մ, 10մ, 20մ, 30մ, 55մ, 70մ և 80մ խորության շերտերում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Փոքր Սևանի Այրիվանքի մոտ մակերևութային և 5մ, 10մ, 20մ, 30մ և 40մ խորության շերտերում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Երեք ամիսներին Սևանա լճի ջրի որակի գնահատականները ներկայացված են Աղյուսակ 12-ում:


Սևանա լճում կենսածին նյութերի պարունակությունները.




Գծապատկեր 72. Սևծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 73. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 74. Սևծ Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 75. Փոքր Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Աղյուսակ 11. Սևանա լճի ջրի որակը 2024 թվականի 1-ին եռամսյակում
Փետրվար

Ջրային ռեսուրս, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դասը ստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դասը ստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն	ԹՔՊ, մանգան, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 10մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 20մ խորություն	Ամոնիում իոն, մանգան, բոր, ալյումին, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 25մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան, ալյումին, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 30մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 10մ խորություն	ԹՔՊ, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 20մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	





Ջրային ռեսուրս, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դասը ստացված ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դասը ստացված ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 30մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 55մ խորություն	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 70մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 80մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), մակերևույթից	ԹՔՊ, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 5մ խորությունից	ԹՔՊ, բոր, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 10մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 20մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 30մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 40մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	

Մարտ

<i>Ջրային ռեսուրս, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>	<i>Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>
<i>Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), մակերևույթից</i>	<i>ԹՔՊ, մանգան, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, մանգան, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, մանգան, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, մանգան, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, մանգան, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 25մ խորություն</i>	<i>ԹՔՊ, մանգան, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 30մ խորություն</i>	<i>ԹՔՊ, մանգան, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, (4-րդ կայանի մոտ) մակերևույթից</i>	<i>ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն</i>	<i>Ամոնիում իոն</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 30մ խորություն</i>	<i>ԹՔՊ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 55մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 70մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	

<i>Ջրային ռեսուրս, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>	<i>Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>
<i>Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 80մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), մակերևույթից</i>	<i>ԹՔՊ, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 5մ խորությունից</i>	<i>ԹՔՊ, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 10մ խորությունից</i>	<i>ԹՔՊ, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 20մ խորությունից</i>	<i>ԹՔՊ, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 30մ խորությունից</i>	<i>ԹՔՊ, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 40մ խորությունից</i>	<i>ԹՔՊ, ԼԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	

ՀՀ Մեանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Բաղարներ
- Բնակավայրեր
- ▲ Մակերևութային ջրերի որակի մակերևութային դիտակետեր
- ▲ Ստորերկրյա ջրերի մակերևութային դիտակետեր
- Ձևտային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Մեանի ջրավազանային կառավարման տարածք

3-րդ	«միջակ»	
4-րդ	«անբավարար»	

**Արարատյան ջրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր
Հիդրոլոգիական դիտարկումներ**

Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում. այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ազատի ջրամբար): Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր. մՅ/վ								
		հունվար			փետրվար			մարտ		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ազատ	Գառնի	1.63	3.05	53	1.67	3.11	54	1.98	3.55	56
Վեղի	Ուրցաձոր	0.57	0.77	74	0.74	0.87	85	1.71	1.34	128
Արփա	Ջերմուկ	2.44	2.54	96	2.63	2.46	107	2.84	2.71	105
Արփա	Արենի	6.90	6.94	99	7.69	7.36	104	13.6	10.9	125


Մակերևութային ջրերի որակ

Վեղի գետի ջրի որակը Արարատից ներքև մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից վերև և ներքև, Եղեգնաձոր քաղաքից վերև հատվածներում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Արենի գյուղից ներքև ջրի որակը փետրվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

Դարբ գետի ջրի որակը գետաբերանում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև փետրվարին և մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Գծապատկեր 76. Արփա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:



Գառնի համայնքի N2045, N2046, N2047 աղբյուրներում դիտվել է ծախսերի նվազում 0.01-0.33լ/վ, իսկ N845 դիտակետում ջրի ծախսը բարձրացել է 0.13լ/վ-ով:

